

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Պատրաստողները գիտեն, որ լուրերը)

Կոնստ. Բոգատով, Մուսա

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(հացիկի և տոն օրերին)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԻՌԱՎԱՅԻՆ ԴՈՒՍԻՆԻՆ

Հնադիտական ժողովը.— Ներքին տեսչի-
թիւնը կոմս Լորիս-Մելիքովի գործունէութիւնը:
Նամակ Սոքալիցի: Նամակ Բոսովիցի: Նամակ
Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տե-
սութիւն: Սովը Հայաստանի մէջ: Վրացի
հեռագիրներ: Յայտարարութիւններ: Բանասի-
րական: Խննդ:

ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հայտնի է որ եկող 1881

թիւն լինելու է Թիֆլիսում ընդ-
հանուր ուսնաց հնադիտական Ժո-
ղովը: Այդ Ժողովը կը զբաղի
կովկասի և Անդրկովկասի հնու-
թիւններով:

Հայոց հին քաղաքակրթու-
թիւնը, որի հետքերը նշմարվում
են սկսած Թիֆլիսի նահանգից
մինչև Պարսկաստանի և ասիա-
կան Թիւրքիայի խորքերը, ան-
շուշտ, մեր կարծիքով, իր պատ-
ւաւոր տեղը պիտի բռնի հնադի-
տական Ժողովի մէջ:

Անկասկած հայ գիտնականնե-
րը ինչպէս էլ մին, Պատկանեան,
Ալեքան, Այոթնեան և ուրիշները
կը ներկայանան այդ Ժողովին և
իրանց ուսումնական հետազոտու-

թիւններով կը նպաստեն Հայոց
ազգի վերաբերեալ հնադիտական
շատ խնդիրների պարզելուն, բայց
ցանկալի է որ և մեզ մօտ եղած
և մինչև այսօր անյայտ մնացած
մասնաւոր անձանց որ և է հնա-
դիտական հետազոտութիւնները,
հանդէս դուրս գային և հնադի-
տական Ժողովի առջև ներկայա-
նային:

Գաւառացի հայ երիտասարդ-
ների մէջ կան մի քանի անհատ-
ներ, որոնք որպէս սիրողներ, տա-
րիներով պարապել են այս կամ
այն պատմական աղբյուրին հնու-
թիւնը, այս կամ այն ազգագրա-
կան կամ լեզուադիտական երե-
ւոյթի ուսումնասիրութեամբ: Թէև
այդ տեսակ աշխատութիւնները
գուրկ էլ լինէին բուն գիտնական
արժանաւորութենից, այնու ա-
մենայնիւ, մեր կարծիքով, որպէս
հում, անմշակ նիւթ, մեծ արժէք
կարող էին ունենալ գիտնական-
ների աչքում, նոր յոյս գցելով մեր
երկրի վերաբերութեամբ գեռ ևս
անբացատրելի մնացած շատ խն-
դիրների վրա:

Հարկաւոր կը լինէր որ Թիֆ-
լիսը, կովկասեան հայերի ինտելի-
գենցիայի կենտրոնը, անտարբեր
չը մնար դէպի լինելու հնադիտա-
կան Ժողովի աշխատութիւնները:
Մեր կարծիքով շատ լաւ կը լի-
նէր, եթէ Թիֆլիսցի հայերը
կազմէին մի պատրաստական մաս-
նաԺողով, եթէ հնար է իրանց
մէջ մի գումար հաւաքէին և ու-
ղարկէին սորան նորան այս կամ
այն գաւառը հնադիտական, լե-
զուադիտական, ազգագրական կէ-
տից ուսումնասիրելու և հնու-
թիւններից լուսանկար պատկեր-
ներ հանելու:

Նոյն մասնաԺողովը կարող է
ընդունել գաւառներից այնտեղ
գտնված զանազան գրութիւնները,
մօնօղրափիւսները, նոյնպէս և հը-
նադիտական զանազան կտորները
ու նմուշները:

Այս հարցի վրա մենք յոյս ու-
նենք դարձեալ մի քանի անգամ
խօսելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒ
ԹԻՒՆԸ

«Wiener Presse» լրագրի Ս. Պետրբուրգի
Թիֆլիսցի գրում է հետևեալ կոմս Լորիս
Մելիքովի գործունէութեան մասին:

«Ամբողջ օրը կոմս Լորիս-Մելիքով աշխա-
տանքներով է ծանրաբեռնված: Առաւօտները
նա աշխատում է իր կանցլարիայի մէջ: Կէ-
սօրին նա ներկայանում է Փառաւոր Կայսրին,
կէսօրից յետոյ պարապում է կամ մասնաԺո-
ղովի անդամների, կամ միտիտների հետ և
միայն 5 ժամին նստում է ծաշելու և յետոյ
հետանում քիչ հանգստանալու համար: Մի
անգամ պատահել է, որ կոմսին այցելելու
համար եկել է նրա մօտ Մեծ Իշխան Նիկո-
լայ Նիկոլայիւն և կոմսին անհանգիստ չա-
նելու համար, սպասել էր նրան գրասենեա-
կում մի քառորդ ժամից աւելի: Նախքան
երկու անգամ, երբեք Թիֆլիսի և Հինգաթի
թիւր 2—3 ժամը կոմսը ընդունում է մաս-
նաւոր անձանց: Այդ ժամանակ նրա հետ
գործ ունեցող իւրաքանչիւր անձ առանց դը-
ժուարութեան նրան ներկայանում է: Դէյու-
տիտներին ստատսկի սովետիկ Իւլիշովիչ,
կամ օրապահ աղիւտանաւոր ընդունում են
այցելուններին, որոնք, իրանց խնդիրքի համե-
մատ, կամ բաւականութիւն, կամ պատասխան
են ստանում, կամ հրաւիրվում են սպա-
սել կոմսին: Կոմսը լսում է բերանացի խն-
դիրները, կարդում է գրաւորները, տալիս
է առհասարակ կարծի, բայց բաւարար պա-

կանս պարզեցնել, պատասխանել քահանայ,—
հաշիւը այժմ էլ պատրաստ է:

—Կարդացէք, տեսնեմ որքան է:
Տէրտէրը դուրս բերաւ ծոցից մի թերթ թուղթ,
կիզոտ, իւղոտած, դեղնած, և երկար տարիներ
նրա ծոցում պահվելով, բոլորովին քրքրված և իր
վաղմի դոյնը կորցրած:—Իս նրա հաշիւագրքին
էր: Թերթի չորս երեսների վրա, խոշոր տառերով,
ձուռումուռ տողերով գրված էին տեղի հօր ա-
պա ա ի կ ն և բ ը: Նա թուղթը մօտեցրել աչքե-
րին, փորձ փորձեց կարդալ, բայց կարդալ չը կա-
րողանալով, թերթը տուեց վարժապետին ասե-
լով.

—Առ, տիրացու Սիմօն, դու կարդա, իմ աչ-
քերը չեն չօղում:

Տիրացու Սիմօն առեց հաշիւը, մի քանի ան-
գամ հազաց, ծօծրակը քորեց, ուղղվեցաւ, և թեր-
թը մօտեցնելով աչքերին, սկսեց կարդալ այն-
պիսի մի ձառական եղանակով, որ կարծես, կոն-
դակ էր կարդում:

«Ձօլախ Մկրի աղջիկը կնքեցի, փողը մնաց 5
դուրուշ, աղջիկը մէկ շաբաթից յետոյ մեռաւ,
թաղեցի, փողը մնաց 7 դուրուշ, խօլի տղան
պղակեցի, փողը մնաց 10 դուրուշ, ստացայ 30
խուրձ խոտ, փողը կանե 3 դուրուշ: Փանօր կնիկը
հիւանդ էր, գնացի նրա տունը, երեք դուրուշ
բժշկական աւետարան կարդացի, փողը մնաց 3
դուրուշ: Սագօր տղան խաչը ջրից հանեց, Բար-
սան 30 դուրուշ էր տալիս, որ ինքը հանէ, ես
Սագօրին խաթր արեցի, 20 դուրուշով բարիչեցայ,
փողը մնաց 20 դուրուշ, ասաց կալի ժամանակը
ցորեան կը տամ, գնացի, ուղեցի, չը տուեց, դը-
ղիրն էլ վկայ է»:

Եւ այսպէս, մինը միւսի ետեւից գրված էր մի
անգին պատմութիւն: Դա իսկապէս հաշիւ էր,
այլ տեղի հօր քահանայական գործունէութեան մի
քանի տարվայ ժամանակագրութիւնն էր, թէև
խառնափնթիւ կերպով նկարագրված, բայց բո-

ԽՆՆԹԸ

ԱՐԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԴՐՆ ԹԻՖԼԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ
Կոմս Լորիս-Մելիքովի գործունէութիւնը:
Նամակ Սոքալիցի: Նամակ Բոսովիցի: Նամակ
Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տե-
սութիւն: Սովը Հայաստանի մէջ: Վրացի
հեռագիրներ: Յայտարարութիւններ: Բանասի-
րական: Խննդ:

Մի և նոյն գիշերը, երբ յարապետը, Հայրապե-
տը և Ալեքս. Բանտի, մէջ փրկիտփայտութիւններ
էին անուր, խորհում էին զօրաւոր հայրենիքի
զինադր Ժողովրդի վիճակի մասին:—Թօմաս է-
ֆէլդին գտնվում էր գիւղի քահանայի տէր: Մա-
րտեք տան մէջ է և ընթերցելից յետոյ ուրախ, դու-
արթ, շատախոսում էր և հանաքներ էր անում
տէրտէրի հետ: Գլխով շարժելով, խօսելով, խօսելով
Դա մի և նոյն տէրտէրն էր, որ այնքան հոգ-
անք պատճառեց այ, Սալմանին, իսկ այժմ լսելով
նրա կորուստը, ցաւում էր, ոչ այն պատճառով,
որ ասպարէզից պիտի անհետանար մի նշանաւոր
գործիչ, այլ անհասարակ հայի կորուստը, ցաւալի
էր նրա համար: Տէր հարը չար մարդ չէր, և եթէ
նա ընդդիմութիւն էր գործում, կամուրջ էր
խանգարել այ. Սալմանի զարգացման գործը:—Այդ
գործը նրա բարի ցանկութիւններիցն էր, ա-
ռաջ դալիս, որովհետեւ փաստաւոր էր համա-
րում:

Նա մի ժամանակ հասարակ դիւղացի էր, փոքր
ի շատէ գրեկ-կարգաւ սովորել էր իր ման-
կութեան ժամանակ ս. Յովնանու վանքում:
Վիզաւանաւորութեան մէջ նրան չը յաջողվե-
ցաւ, աղքատացաւ և գնաց օտար կրկիր

առաջանալու և յետոյ կամ ինքը անձնականապէս կարգադրուի է, կամ խնդրողին իր կանցելարիան է ուղարկուի, որտեղ գործը առանց յապաղման կատարուի է: Շատ անգամ կոմիտէն մի անգամից 50 մարդ է սպասուում, անհերք է, որ ամենին նա շատ ժամանակ է կարող նստիլ, որովհետեւ նրա ընդունելութիւնը մի ժամից աւելի է տեւում: Մեծ մասամբ խնդրողները կանայք են լինում, իմ կարծիքով, կայանաւորվածների կամ արտաքսվածների կանայք: Սե Հազուաւր, ողորմելի դէմքը, երեսի տխուր արտայայտութիւնը բաւական աւելի որոշ են ազդում և կոմիտէին Վէլիքով կարելութեան չափ աշխատում է յարգել նրանց ցանկութիւնը: Կոմիտէին Վէլիքով անբաւական է կամայայտական կայանաւորվածներից, որով մեկնվում է այն հանգամանքը, որ նրա տունը խնդրատու կանանցով լիքն է լինում: Ամենքին յայտնի է, թէ նա ինչպէս վարվեցաւ կայանաւորված ուսանողների հետ: Մի արժանահատ անձից լսեցի հետեւեալը. կոմիտէի մօտ բերեցին մի յերափոխական ուսանող: Նա ծաղրելով ասաց. «Արեւմտ դու ես համայն աշխարհի յերափոխողը: Եւ դու ես կամենում պետութիւնը կառավարել: Առաջ ասա ինձ, ինչ ես սովորել:» Աւանդը պատասխան է տալիս: «Վե դու, որ այդքան քիչ ես սովորել և փորձվել, երեւակայում ես, որ մարդիկ կը հետեւեն քո յիմար գաղափարներին: Դեռ դու ինքդ ոչինչ չես սովորել: Առաջ դո՛ւ մի օրինաւոր բան սովորիր, յետոյ կարող ես պետութեանը օգուտ բերել: Եթէ դու կը սկսես այրել և սպանել, քեզ հետ կը վարվին ինչպէս չարագործի, մարդասպանի հետ, առանց ուշադրութիւն դարձնելու քո խելագար գաղափարների վրա: Եթէ կամենում ես, որ քեզ հետ վարվին այնպէս, ինչպէս օրինաւոր մարդու հետ են վարվում, ուրեմն ինքդ օրինաւոր վարվի: Նա քեզ արձակում եմ, միայն այն պայմանով, որ դու ինձ պատուաւոր խօսք կը տաս այլ ևս չանել այն, ինչ չի համար որ կայանաւորվել ես: Պատուաւոր խօսքը արվում է, թէ բառացի և թէ գրաւոր, յետոյ կոմիտէ շարունակում է. «Ինչ ես մտադիր անել:» Պատասխան. «Ես սպրիտ միջոցներ չունեմ:» — Եւս

քեզ միջոց կը տամ: Ինչ ես կամենում լինի:» — Ուսուցիչ: «Ոչ, այդ չի լինի, քո գաղափարների տէր մարդուն ժողովրդի կը թող չէ կարելի դարձնել: Բայց դու կարող ես կարգաւ և գրել, ես քեզ պաշտօն կը տամ որ և է նահանգական վարչութեան մէջ, դու արտաքսված չես լինի, այլ կաշխատես քո օրական հացը և պետութեանը օգուտ կը բերես:» Կոմիտէին Վէլիքովի ուսանողների հետ ներդաշնանաբար վարվելու ապացոյց կարող է լինել և այն, որ նրա միջնորդութեամբ Խարկովի մէջ աքսորմանը դատաւարապաճ ուսանողներ Կայսրից ներումն ստացան: Այդպիսի վարմունքը առանց հետեւեցնելի չէ մնում և նոյնպէս մեծ ծառայութիւն է համարվում:

Յետոյ, նկարագրելով կոմիտէին Վէլիքովի ընտանեկան կեանքը, նոյն թղթակիցը գովում է նրա պարզութիւնը և վերջը ասում է, որ ժողովուրդը կոմիտէի խելացի և զործու նկայ մարդ է համարում և Թագաւորից ըստ կամ մինչև վերջին գիւղացին բոլորը նրան կատարեալ հաւատ են ընծայում:

ՆԱՄԱԿ ՍՂԱԽԻՑ

Մարտի 27-ին

Տէր խմբագիր, ահա այս մի անհնգան մարմինը դարձած ազգի ամենափոքր մասի համար, որ հարկադրած է բոլոր իր զգացողութիւնները կուտ տալ իր աղետներով արտասուքների հետ միասին և որ դառն հանդամանքների պատճառաւ, վասպետական արգելանք դառնալից, հաջի փոխանակ արտաքսվածները կը յուսայ, ժողովրդի մի չնչին լուսնայ, այն է՝ 133 ր. 65 Կ., որից 117-ը ուղարկեցի ձեզ ամսոյս 14-ից, և մնացած 14 ր. ուղարկում եմ հիմա, որից 1 ր. 5 Կ. հանելով փոստի ծախս և 1 ր. 60 Կ. էլ որ այստեղ ինձ այս գործի մէջ օգնողների համաձայնութեամբ յանձնել եմ մի չքաւոր ընտանիքի, ընդամենն 131 ր.:

Ահա և նուիրատուաց անունները. Մշակու Շաւրղեան 3 ր., Արտէմ Շաւրղեան 1 ր., Յովհաննէս Գոզաբեան 5 ր., Նիկող. Սէրբերակեան 3 ր., Յովսէփ Ամիրխանեան 5 ր., Գաւրիլ Զիւլաբեան 1 ր., Միքայէլ Պատուեան 1 ր., Գարաթիմ Մէլքե-Նուբարեան 3 ր., Ալէքս. Ղորղանեան 1 ր., Գարշիկ (Յանեան) 1 ր., յանուն հանգուցեալ Աւետիքի Մէլքե-Նուբարեան, նորա եղբայր Եղգորից

5 ր., Զաքար Զէքիւեան 1 ր., Աղէք. Սահման 1 ր., Թադէոս Կիսրեան 1 ր., Միք. Խաչումեան 1 ր., Մկրտչ Սահակեան 1 ր., Ստեփ. Պետրոսեան 1 ր., Մշակու Մշակեան 1 ր., Միք. Խիթաբեան 1 ր., Սիմէոն Աղաբեան 1 ր., Արտէմ Զաւրաբեան 1 ր., Միքայէլ Զիւլաբեան 2 ր., Թովմաս Ամիրխանեան 1 ր., Նիկող. Յովսէփեան 1 ր., Սիմ. Ղորղանեան 1 ր., Հաջի Կարապետ Շահաշաբաբեան 5 ր., Միք. Արսէլեան 1 ր., Եղգոր Արսէլեան 1 ր., Նիկող. Յովսէփեան 1 ր., Յովհաննէս 1 ր., Սոփիայ Ամիրխանեան 1 ր., Նունէ Ղուկիշեան 4 ր., Կէկէ Խորոզեան 1 ր., Մակար Ղարաբեկեան 1 ր., Միքէլ Միքայեան 3 ր., Սիմ. Ե. Յովս. Ղաջարեան 40 Կ., Սարգ. Ա. Բ. Տէր-Ստեփանեան 1 ր., Եղիշէ Բ. Տէր-Աստուածաբան 1 ր., Արշակ երեք Տէր-Ստեփանեան 3 ր., Գրիգոր Խիթաբեան 1 ր., Եկատերինէ Արքութեան 1 ր., Եկատերինէ Տէր-Մատթէոսեան 1 ր., Բարբառէ Տէր-Ստեփանեան 1 ր., Սոփիայ Տէր-Մատթէոսեան 1 ր., Օփանայ Տէր-Մատթէոսեան 1 ր., Եւայ Տէր-Ստեփանեան 50 Կ., Օփանայ Արեշեան 1 ր., Կէկէ Գոճեան 1 ր., Նաթէլ Գոճեան 1 ր., Մազաշէլ Լիսիեան 1 ր., Սալովմէ Ամիրխանեան 1 ր., Թալիկ Օթարեան 1 ր., Կէկէ Սուլխանով 1 ր., Եկատերինէ Ղուկիշեան 1 ր., Աննայ Ղաւստեան 1 ր., Բարբառէ Տէր-Մատթէոսեան 1 ր., Սոնա Ամիրխանեան 2 ր., Քէթեան Նուբարեան 1 ր., Նատալիայ Նուբարեան 2 ր., Սոփիայ Մատթէոսեան 40 Կ., Եւայ և Մարիամ Զարուկեան 2 ր., Եղիշէ Տէր-Մատթէոսեան 1 ր., Խիսանուհի Խլիսա Վաչանեան 1 ր., Եկատերինէ Զուգեւով 1 ր., Նինա Նազարով 1 ր., Մաշա խելեւով 20 Կ., Մարմար Ղաջարեան 10 Կ., Մակայ Գոճեան 20 Կ., Քալի Պատուեան 1 ր., Եկատերինէ Պատուեան 20 Կ., Քալի Սարգսեան 1 ր., Օրինայ Պատուեան 50 Կ., Եղիշէ Գաւրիէլով 1 ր., Բարբառէ Արսէլեան 1 ր., Պալմէ Արսէլեան 50 Կ., Մակա Սերբերակեան 1 ր., Մարիամ Արսէլեան 1 ր., Յովհաննէս Մազեան 1 ր., Շուշանիկ Սերբերակեան 50 Կ., Կէկէ Սերբերակեան 50 Կ., Մարիամ Եւրեան 20 Կ., Մարան Շահաշաբաբեան 40 Կ., Նատալիայ Սահակեան 1 ր., Նատալիայ Տէր-Աւագեան 1 ր., Թալիկ Տէր-Աւագեան 50 Կ., Օփանայ Տէր-Աւագեան 1 ր., Թամարայ Սափարեան 1 ր., Թալիկ Սափարեան 2 ր., Եղիշէ Սափարեան 1 ր., Շմիկեան Պալապա 70 Կ., Նինա Բէկեւով 40 Կ., Լիզայ Շափարեան 1 ր., Մաշինայ Յարութեան 1 ր., Օրինայ Յարութեան 1 ր., Իշիկ. Վաչանեան 25 Կ., Վելիցիկայից Օփանայ Տէր Մովսէսեան 1 ր., Օփանայ Տէր Ղազարեան 40 Կ., օր. իշխանուհի Նատալիայ Զանգիէրով 1 ր., Լիզայ Սարգսեան 40 Կ., Սի-

դոնեա փրադեան 1 ր., Մակայ Սափարեան 40 Կ., Կէկէ Տէր-Գրիգորեան 50 Կ., Խիսանուհի Թադէոս Խիթաբեան 1 ր., Սոփիայ փրադեան 40 Կ., Սալովմէ Օհանեան 20 Կ., Թիսաթին Օհանեան 1 ր., Թէկէ Ղազարեան 1 ր., Կէկէ փրադեան 1 ր., Եկատերինէ Տէր-Ղազարեան 40 Կ., Միք. Շահաշաբաբեան 1 ր., Քալի Ղաւստեան 1 ր., Կէկէ Ղաջարեան 10 Կ., Գայանէ պատուեան 20 Կ., Վանո Ղազարեան 20 Կ., Նիկողոս Սափարեան 50 Կ.:

Առանձին չնորակաւորվելու կը մատուցանեմ Սարգիս Ա. Բ. Տէր-Ստեփանեանին, Եղիշէ Բ. Տէր-Աստուածաբանին, Գրիգոր Խիթաբեանին, Քալի Սարգսեանին և Վէլիցիկայից Թէկէ Ղազարեանին, որոնք ինձ աշակից եղան այս բարի գործի մէջ:

Արշակ Բ. Տէր-Ստեփանեան

ՆԱՄԱԿ ՔՈՍՏՈՎԻՑ (Գօնի վրա)

Մարտի 18-ին

Անցեալ փետրվար ամսին կարգաւոր «Մշակ» լրագրի մէջ վառապէս գաւառի հայոց սրտանման զրուիչները, որոյ մասին հաղորդելով, հրաւիրում է գերապատեալ հայր սուրբը՝ ազգասէր հայերուն մարդասիրական տուրքերով օգնութիւն հասնել մեր թշուառ հայրենակից եղբայրը:

Ասն այդ ցաւալի դէպքը պարոն խմբագիր, ինձ առիթ տուեց, իբրեւ սուրբ պարտաւորութիւն մը համարելով մի նուիրական ցուցակ կազմել, և ամեն ուրախ հոգով դիմել Ռոստով (Գօնի վրա) քաղաքի մէջ ինձ ծանօթ հայ երեսնամարդներին, որոնք ջերմեանով արտաքսված ամեն ոք իր կարողութեան համեմատ, նուիրեցին այս գումարը, որ առաքելով ընդ ամեն հանդերձ նուիրատու անձանց ցուցակը, շնորհ ունեմ ամենախնայաւոր խնդրել՝ ողորմած տէր, հասուցանէ՛ք զայն ըստ իւր պատշաճին:

Անհրկեայ յուսալով, որ այս թէկ նուազ, բայց յատուկ մարդասիրական նուէրը մի փոքրաւոր հայ երեսնամարդներից կընդունվի ուր հարկ է, նա եւ ի չարս արժանի օգնատուութեան միջոց ի բերաւորաց: Այլ ըստնորայոցի Մուշեղ Բեան զարեանց 3 ր., Գալուստ Անպիտով 1 ր., Առաքել Ուսանեանց 2 ր., Գրիգոր Տէր-Յարութեանց 2 ր., Հին-Նախիջեանցի. Խվան Բազարով 2 ր., Խաչատուր Սարգսով 1 ր., Գալովի Զանաւով 1 ր., Մուրատ Լաւաղարով 1 ր., Սալմաստի. Զարուկեան Թանիկեանց 3 ր., Բաբա Եղգորով 1 ր., Ստեփան Ավետեան 1 ր., Նիկողոս Ստեփանեան 1 ր., Արքանաւ Ղուկիշեանց 1 ր., Կառնիկ Կա-

վանդակում էր իր մէջ բաւական փաստեր, թէ ինչով է զբաղվում գիւղական տէրաւորը:

— Օրինաւոր հաշիւ է, ասաց էֆէնդին, ընդհանրապէս և չը կարողանալով համբերել, մինչև տիրացուն կը վերջանայ բոլորի ընդմերջանութիւնը: — Դուք, տէր հայր, յանձնեցէ՛ք այդ թուղթը ինձ, ես բոլորը հաւաքելով կը տամ Ն...չէնի գիւղացիներն էլ վաճառք անուրից ուշացնում էին, իր ժամանակին չէին տալիս. վարդապետը մի նամակ գրեց ինձ, ես բոլորը մի օրվայ մէջ հաւաքել տուեցի, յետոյ վաճառք օրհնութեան գիր տուացայ: Տէրաւոր այնքան քնակեան էր համարում այս միջոցով իր ապաւինները հաւաքելը, որ ոչ միայն համաձայնեցաւ էֆէնդու առաջարկութեանը, այլ կրկին շնորհակալութիւն յայտնեց և կրկին սկսեց օրհնել նրա թանգազին կեանքը:

Բայց ինչու էֆէնդին յանձն առեց կատարել այս ծառայութիւնը: Նա այն տեսակ մարդերից էր, որ առանց նպատակի, առանց իր սեպական հանքի, ոչ չէին լաւութիւն չէր անի: Այժմ ինչն ստիպեց նրան այնքան բարի լինել, որ մինչև անգամ խոստացաւ հաւաքված գումարից տասանորդ չը վեր առնել, որ սովորաբար ստացվում էր, երբ որ և ինչ գումար վճարվում էր կառավարութեան պաշտօնեաների հրամանով:

— Հայր Արքանաւ օրհնութիւնը թող ձեզ վրա լինի, զօրանաք, ասաց քահանայ, լսելով էֆէնդու վերջին խոստմունքը:

Ապաւինների մի այսպիսի ցուցակ էլ տիրացու Սիմէոն ծոցումն էր պահում. նա էլ իր աշակերտներին տասնալիքներ ունէր, և մտածում էր հաշիւը ներկայացնել էֆէնդուն: Բայց տէրաւորը նրա ականջին ասաց, զի ող խը հաւաքվի, քոնք յետոյ:

Տէր Մարութի ընտանիքը շատ փոքր էր թուով. նրա միակ որդին վախճանվեցաւ, թողնելով իր կիներ այրի երկու փոքրիկ երեխաների հետ: Հարաւ ամուսնի մահից յետոյ էլ մարդու չը գնաց,

մնաց քահանայի տանը և խնամք էր տանում իր որդիներին: Ինքը տէր հայրը վաղուց զրկված էր իր տիրուհուց և բոլորովին ամուսնի կեանք էր վաւորում:

Այն գիշեր հարսը, հիւրերին ընթրիք տալուց յետոյ, զբաղված էր իր գաւազով, որ սաստիկ հիւսնող էր: Նստած նրա մահճի մօտ, ողորմելի կինը խորին տխրութեամբ նայում էր հիւսնողի երեսին, չօշափում էր նրա ջերմ թաթիկները և լսում էր նրա ծանր չնչառութիւնը: Այդ զաւակի մէջ նա գտնում էր պատկերը այն աղաւթի, որին սիրում էր. այդ զաւակի մէջ գտնում էր զմիտաւոր մարդ իր միտքաւորութիւնը կորցրած ամուսնի մահից յետոյ, Նա համարեալ չէր լսում, և ուշադրութիւն եւ չէր դարձնում, թէ ինչ է խօսվում տան մէջ. այլ միանգամայն գոլթ էր գործով դարձած, աչքի առջև իր հիւսնող մանուկին էր միայն տեսնում:

Բայց տէրաւորը, ուրախացած էֆէնդու խոստմունքներով, կամեցաւ իրանց ուրախութիւնը աւելի կատարեալ անել, և հրամայեց հարսին լցնել արագի չիշը, որ արդէն դատարկված էր, բայց զրանից անաղայն * պատրաստել: Թէն ընթրիքը վերջացած էր, բայց տեղային սովորութեան համեմատ, յարգելի հիւրին մի առանձին պատիւ արված կը լինէր, եթէ խնամք կը շարունակվէր:

Հարսը այն աստիճան չիտկված էր, որ քահանայան երկու անգամ կրկնեց իր հրամանը, մինչև նա կարողացաւ հասկանալ, թէ ինչ էր ուղում տէրաւորը: Արագ կարելի էր գտնել. նա չիշը լցրեց. այդ պաշարը միշտ անպակաս էր լինում տէր հօր անից: Բայց ինչով պատրաստել ծածան: Ծանր քաղցրեղէն չը կար. Զայանել այդ մասին՝ մինչև անգամ ամօթ էր: Հայ մարդու տանը հիւրի համար ամեն բան պէտք է գտնվի: Նա մտածեց քնալ և հարանից փոխ առնել:

*) Մաղպա նշ. դեռուրա, պատրաստված չոր մրգեղէններից:

Գրում սաստիկ մոլթն էր և անձրեւ հեղեղի նման թափվում էր երկնից: Խեղճ կինը դուրս եկաւ բակը, սնցաւ ցնեցի միջից, բարձրացաւ կտուրի վրա, որ այնտեղից իջնէ հարեանի տունը: Այդ միջոցում նա լսեց, որ հարեանի դուռը սաստիկ ծեծում էին, և զրաից թուրքերէն լսելով՝ սպառնալիքներ էին կարգում, հրամայելով, որ բաց անեն. իսկ ներսից երգում էին զպատասխանում էին, թէ այստեղ չեն պահված նրանք, որոնց պատում են... Բայց ունե էին պտուռ. ինչ թուրքեր էին դրանք, որ գիշերային այդ տարածում պահուեւ, աշխատում էին ներս խուժել մի հայի տունը:

Զուլուն—այսպէս էր տէրաւորի հարսի անունը— լսելով փողոցի աղմուկը, սաստիկ վախեցաւ, և երկիւղից ոչ կարողացաւ հարեանի տունը գնալ և ոչ իրանց տունը վերադառնալ, այլ չուարած և անշարժ մնաց կտուրի վրա: Նոյն րոպէում նրա ակնաջին հասաւ խոսակցութեան հաղւա լսելի չնչնջոց. կարծես, խոսողները բարձրանում էին հարեանի տան սանդուղքներից և չը գիտէին թէ որ կողմը պէտք էր փակել:

— Կամայ, Ստեփանիկ... — Բարձր, զնամ, Սառա... —

Զուլուն ծանաչեց նրանց, Նրա երկիւղը փարատվեցաւ, նա այժմ բոլորովին այրալան սիրտ ստացաւ, երբ տեսաւ, որ այդ ողորմելիները օգնութեան կարօտ էին: Նրան արդէն յայտնի էր ծեծանքի խաչոր տան այնտեղից ցաւալի անցքը: Նա գիտէր, որ նրա գերազանցող կնիկները այն գիշեր գիւղի զանազան տներում թաղված էին. իսկ այժմ պտուռում էին նրանց, և ինչ նպատակով... այդ ևս հասկացաւ Զուլուն... Բուրմի փողոցում գտնվող և հարեանի դուռը ծեծող թուրքերը, ոչ այլ ոք էին, եթէ ոչ ծերունի խաչոր որդիներին կապանաւորող զինուորներից մի զանիւր:

Սառան և Ստեփանիկ այժմ գտնվում էին տէր հօր կտուրի վրա, և որսորդներից հայածված եղ-

ջերուի նման, ամեն կողմից պաշարված, մոլորված, չը գիտէին թէ դէպի որ կողմը պէտք էր փախչել: Անձրեւ վերսից թափվում էր. Գիւղացիները զուրկեւ փակ, և իրանք քնած էին: Գիշերը կէսի վաղուց անցել էր արդէն:

Այդ միջոցին փայտապեղ կայծակը և նրա վայրկեանական լուսաւորութեանը յաջորդեց որոտ ման սարսափելի զղրդիւնը: Կայծակի լուսով նր կարվեցաւ կտուրի վրա կանգնած Զուլուն անոր, կերպարանքը: Ստեփանիկը, տեսնելով նրան, կայծեց, թէ թուրքերից մէկը արդէն բարձրացել, կտուրի վրա: Նա երկիւղից թուլացաւ և ընկաւ Սառայի կուրծքի վրա: Զուլուն մտնեցաւ նրանց:

— Ես եմ, մի վախեցէ՛ք, ասաց նա: — Ա՛խ, Զուլո, դու՛ն ես, ասաց Սառան դողողալով, — սէր Աստուծոյ, մեզ մի տեղ, հիւսն էր բռնեմ մեզ... հիմա կը տանեն մեզ...

Զուլուն մնաց չուարած. հրեղի տանել նրանց հրեղի թաղեցին. իրանց տանը կանգնածուր հիւրեր կային, և տէրաւոր հաղիւ թէ կընդունէր այ տեսակ փախտականներին: Այսուամենայնիւ մտածում էր Զուլուն, պէտք էր օգնել այդ որդի մկնիներին: Նրան յայտնի էր բոլոր անպատուութիւնը, եթէ նրանք թուրքերի ձեռքը կընկնէին: Միւս կողմից, նրան սպառնում էր մի ծանր պատասխանաւորութիւն, եթէ ինքը թաղաւոր տեղ մար այդ յանցաւորներին, որոնց յանցանքը նր մէջն էր միայն, որ կին էին... Այդ բոլորը ին նում էր Զուլուն: Բայց կտրեկցութիւնը նրա մի կտրեկցութեան երկիւղի և վարանման զգացմունքի իսկ մօտայուտ վտանգը ծնեց: Նրա զլուսւմ փեկ կուրծեան մի միջոց:

— Գնանք, ասաց նա, բռնելով Ստեփանիկ ձեռքից, և Սառային՝ օգնելով, երկուսը միասին գրկեցին խեղճ աղջկան, որ տակաւին ուշադրեցութեան մէջ էր: Նրանք սկսեցին ցած իջնել կտուրից: Այդ ջոցին լսելի եղաւ մի ոստիկ շառաւիղ, որ

